



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՐԵՍՊԱԿՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ե ԳՐԻԳՈՐՅԱՆ

4» 12 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 101

**Ձեռնարկողը՝**

**<<Հայգյուղչիննախագիծ>> ՍՊԸ**

Ք. Երևան, Կիևյան 16

**Գործունեությունը՝**

**«Շիրակ-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի Շիրակի մարզի գյուղերի և Գյումրի քաղաքի կոյուղու համակարգի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվեպովություն**

Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 101

<<14>> 12 2018թ.

**«Շիրակ-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի՝ Շիրակի մարզի գյուղերի (12) և Գյումրի քաղաքի կոյուղու համակարգի (<< Լոպ 1.3 >>) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

<<Հայգյուղշիննախագիծ>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրույթային փաստաթուղթ.  
- ազդեցության ռազմավարական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն,  
- ծրագրային փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝

Շիրակի մարզ

Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և նրա հարակից համայնքերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծրագրային փաստաթղթերը հանդիսանում է համայնքային ենթակառուցվածքների ծրագրի (ՀԵԾ) II, փուլ 3-ի մաս, որը ներկայումս կառավարվում է «Ջրային տնտեսության պետական կոմիտեի» ներքո գործող Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից: Նախատեսվում է «Շիրակ Ջրմուղկոյուղի» Փակ Բաժնետիրական Ընկերության (ՇՋԿԸ ՓԲԸ) սպասարկման տարածքում իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների վերականգնման աշխատանքներ: Ծրագիրը ֆինանսավորվում է KfW, ԵՄ-ԵՆԲ և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Ծրագրի տարածքը ներառում է Շիրակի մարզի մեկ քաղաքային և 12 գյուղական համայնքներ: Այն ընդգրկում է Գյումրի քաղաքի և Ախուրիկ, Առափի, Այգաբաց, Բայանդուր, Գետք, Հացիկ, Հայկավան, Ղարիբջանյան, Վահրամաբերդ, Կապս, Ոսկեհասկ, Երազգավորս համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին /բաշխիչ ցանցի կառուցում, վերակառուցում, նորացում, ընդլայնում/ անջնջող որոշ հրատանա միջոցառումներ:



Ծրագրի նպատակն է՝ շարունակական, շուրջօրյա, ապահով և հիգիենիկ ջրամատակարարման իրականացման և կոյուղու համակարգերի բարեկարգման միջոցով, բարելավել նշված տարածքում բնակչության կենսական, սոցիալական և առողջական պայմանները:

Ռազմավարական գնահատման հաշվետվությունում այլընտրանքների վերլուծության արդյունքում, ընտրվել է համայնքների ջրամատակարարման համակարգերի հիմնովին վերանորոգման տարբերակը:

Ծրագրում ելակետային բնապահպանական պայմանների վերաբերյալ տվյալները հիմնված են բնապահպանական սկրինինգի ուսումնասիրությունների արդյունքների վրա:

Կատարված ուսումնասիրությունների և ֆոնդային նյութերի տվյալների համաձայն, ուսումնասիրվող բնակավայրերում գրունտային ջրերը տատանվում են 2-10 մ և ավելի խորը մակարդակում: Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում են հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին:

Տարածքի ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Երկրաբանական երևույթներից հանդիպում են մակերեսային էրոզիա և մթնոլորտային տեղումներով պայմանավորված ջրողողումներ՝ հունախորացում, հունափոխում, ինչպես նաև ջրածածկման դեպքեր:

Շիրակի մարզի բուսական աշխարհը խիստ բազմազան է, հանդիպում են Հայաստանի Կարմիր գրքում գրանցված շատ բուսատեսակներ՝ հիմնականում տափաստանային տիպի: Գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը՝ տարախոտա-հացազգի խոտաբույսերի տեսքով:

Շիրակի մարզը բնակատեղի է նաև կենդանիների և թռչունների որոշ հազվագյուտ տեսակների համար: Հանդիպում է տափաստանային, բարձր լեռնային գոտիներին բնորոշ կենդանատեսակներ:

Գյումրի քաղաքը և գյուղական բնակավայրերը հարուստ են պատմամշակութային և հնագիտական հուշարձաններով:

Ծրագրի իրականացումը չի կարող ունենալ որևէ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի նշված բաղադրիչների վրա, քանի որ դրանք ծրագրով նախատեսված տարածքներից գտնվում են զգալի հեռավորության վրա: Շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել համայնքային նշանակության տարածքներում:

Գյումրի քաղաքի և հարակից գյուղերի մեծամասնության ջրամատակարարումն իրականացվում է հիմնականում 3 կապտաժներից (աղբյուր) և Գյումրու հյուսիսում գտնվող արտեզյան ջրհորներից (Ղազանչի 1, 2, Կրասար և Զույգաղբյուր), որոնց ընդհանուր հզորությունը կազմում է մոտ 1700 լ/վ: Աղբյուրների ջուրը բարձր որակի է:

Առկա բաշխիչ ցանցից ջրակորուստների շատ մեծ լինելու պատճառով ջրատարները լցվում են կիսով չափ և նշված ջրաքանակը չի բավարարում բնակչության շուրջօրյա ջրամատակարարմանը: Բաշխիչ ցանցերը հատկապես վատ վիճակում են գտնվում գյուղական համայնքներում, դրանք շահագործվում են ավելի քան 50-60 տարի և ունեն հիմնանորոգման կարիք:

Գյումրի քաղաքի և հարակից 12 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման աշխատանքները ներառում են.

- առկա բաշխիչ ցանցի ապաշահագործում, ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառուցում և վերակառուցում,



- Ախուրիկ, Բայանդուր, Ղարիբջանյան, Գետք և Երազգավորս գյուղերին սպասարկող գոյություն ունեցող 2x500մ<sup>3</sup> ՕԿՋ-ների վերանորոգում:

**Գյումրի քաղաքը** (4429 հա) գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմտյան, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում, ունի հարթավայրային ռելիեֆ:

Քաղաքում առկա է մակերևութային ջրերի առանձին ջրահեռացման, ինչպես նաև քարե ջրթող խողովակների հին ջրամատակարարման համակարգ (գրունտային ջրերի հավաքման համար), որոնք կոչվում են «Քյարիզներ»: Քաղաքի ռելիեֆային պայմանները թույլ են տալիս իրականացնել կեղտաջրերի ինքնահոս հեռացում, բայց ջրահեռացման համակարգի անմխիթար վիճակի պատճառով հաճախակի են խցանումները: Գյումրու հարավում գտնվող 60.0 հազ. մ3/օր հզորությամբ կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանի չաշխատելու արդյունքում չմաքրված կեղտաջրերը լցվում են քաղաքի տարածքով հոսող գետակները:

Ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքում նախատեսվում է 5118մ ընդհանուր երկարությամբ կոյուղու խողովակների փոխարինում de110-de500, որից 2892մ-ը՝ de315-de500 տրամագծի պոլիէթիլենե խողովակներով: Աշխատանքների առաջնայնությունը տրվել են այն տեղամասերին, որտեղ առկա են փլուզման կամ խոշոր խցանումների հետևանքով առաջացած շահագործման խնդիրներ: Տարածքների վերջնական ընտրությունն իրականացվել է ՏԻՄ-երի հետ համագործակցության և նրանց հետ համաձայնեցման արդյունքում:

**Ախուրիկ գյուղի** ջրամատակարարումն իրականացվում է 100մ տրամագիծ ունեցող թուջե ջրագծով, Ոսկեհասկ գյուղի մոտ գտնվող ջրամբարից: Բաշխիչ ցանցն ունի 8կմ երկարություն և բաղկացած է պողպատե խողովակաշարերից, գտնվում է վատ վիճակում, որի պատճառով մեծ են ջրակորուստները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերականգնել Ոսկեհասկ գյուղից դեպի արևելք գոյություն ունեցող ՕԿՋ-ն և գյուղի խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցը՝ հետևյալ ծավալներով.

- L=1282մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում՝ de160 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- 8922 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- 273 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

- Բաշխիչ ցանցում 12 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

**Առափի գյուղի** ջրամատակարարման ցանցը կազմված է երկու միմյանցից անկախ մասերից՝ նոր և հին: Բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը 20կմ է, որն իրականացվում է թուջե և պողպատե խողովակներով: Այն գտնվում է շատ վատ վիճակում, որի պատճառով հաճախակի են վթարները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է գյուղի տարածքում կառուցել ջրամատակարարման նոր բաշխիչ ցանց.

- L=330 մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում՝ DN 250 տրամագծով պողպատե խողովակներով:

- 13134մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:



- 480 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

- Բաշխիչ ցանցում 12 փականային հանգույցների և 6 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում

- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգի ներսում բարձր ճնշումների կարգավորմանն ուղղված՝ գյուղի տարբեր հատվածներում 1 ճնշման կարգավորիչի և 1 ջրամաչափական հորի կառուցում:

**Այգաբաց գյուղի** խմելու ջրամատակարարումը համարվում է կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը: Տնային տնտեսությունների շուրջ 50%-ն ունեն սեպտիկ հորեր: Բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը մոտ 4 կմ է և նրա հիմնական մասը կարիք ունի կապիտալ վերանորոգման: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

- 8736 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- Գոյություն ունեցող 250մ<sup>3</sup> և 150<sup>3</sup>մ ՕԿՋ-ների վերանորոգում՝ տարածքի ցանկապատմամբ:

- 170 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

- Բաշխիչ ցանցում 9 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման նպատակով ջրամատակարարման 1 հորի կառուցում:

**Բայանդուր գյուղի** բաշխիչ ցանցն ունի մոտ 10 կմ երկարություն: Տների մոտ 70%-ը միացված է ցանցին, իսկ բնակիչների շուրջ 30%-ն օգտվում է փողոցներում և բակերում գտնվող ծորակներից: Գյուղը չունի ՕԿՋ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերականգնել Ոսկեհասկ գյուղից դեպի արևելք ընկած գոյություն ունեցող ՕԿՋ-ն, կվերականգնվի նաև գյուղի խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցը.

- L=6398մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- 147 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

- Բաշխիչ ցանցում 7 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

**Գետք գյուղի** բաշխիչ ցանցը կառուցվել է 1965թ-ին և մինչ օրս չի վերանորոգվել, որի պատճառով հաճախակի են վթարները: Քայքայված խողովակների պատճառով ջրակորուստները շատ մեծ են: Բաշխիչ ցանցում ճնշումն անբավարար է, որի հետևանքով գյուղի ծայրամասերին գրեթե ջուր չի հասնում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերականգնել գյուղի խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցը.

- L=2409մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- 80 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:



• Բաշխիչ ցանցում 5 փականային հանգույցների, 1 հիդրանտային հորի կառուցում և վերակառուցում:

**Ղարիբջանյան գյուղակի** բաշխիչ ցանցը կառուցվել է 1953 թ-ին, ջրամատակարարումը շուրջօրյա է, սակայն բաշխիչ ցանցը շատ վատ վիճակում է: Այն մասամբ է վերանորոգվել, մեծ են ջրակորուստները, ինչի հետևանքով բնակիչները ջուր չեն ունենում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

• L=7672 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլեն խողովակներով :

• 200 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

• Բաշխիչ ցանցում 13 փականային հանգույցների և 7 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

• Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման նպատակով ջրամատակարարման 1 հորի կառուցում:

**Հացիկ գյուղի** առկա բաշխիչ ցանցի երկարությունը կազմում է 10.8կմ, որի մեծ մասը կառուցվել է 1960-ականներին և գտնվում է խիստ անմխիթար վիճակում: Բաշխիչ ցանցում մեծ են հոսակորուստները:

Նախկինում վերակառուցվել են մոտ 1.2 կմ բաշխիչ խողովակաշարեր, իսկ մնացածը փոխարինման կարիք ունեն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

• L=9192 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլեն խողովակներով:

• 254 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

• Բաշխիչ ցանցում 12 փականային հանգույցների և 1 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

**Հայկավան գյուղն** հիմնականում ապահովված է շուրջօրյա խմելու ջրով: Գյուղում գործում է 2013 թ շահագործված 250մ3 տարողությամբ ՕԶԿ: Բաշխիչ ցանցն ունի մոտ 18 կմ երկարություն: Չնայած 1 կմ ջրագծերի հատվածի վերանորոգմանը, խմելու ջրամատակարարման ցանցի վերանորոգումը համարվում է համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկը: Գյուղը մասնակի է կոյուղացված:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

• L=1103 մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում՝ de125 տրամագծով պոլիէթիլեն խողովակներով:

• L=7652 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլեն խողովակներով:

• 267 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

• Բաշխիչ ցանցում 11 փականային հանգույցների և 5 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

**Կապս գյուղի** խմելու ջրի ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս եղանակով և ունի 7 կմ երկարություն: Խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցը



քայքայված վիճակում է, որը ջրամատակարարման անընդհատ խափանումների և ջրի մեծ ծավալով կորուստների պատճառ է դառնում:

Բնակավայրի կոյուղու համակարգն ունի 1.0 կմ ընդհանուր երկարություն, որը նույնպես քայքայված վիճակում է և ունի վերանորոգման կարիք:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

- L=822 մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում՝ de160 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- L=5788 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- 180 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

- Բաշխիչ ցանցում 7 փականային հանգույցների և 6 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգում բարձր ճնշումների կարգավորմանն ուղղված՝ գյուղի տարբեր հատվածներում 1 ճնշման կարգավորիչի և 1 ջրամաչափական հորի կառուցում:

**Վահրամաբերդ գյուղն** ունի շուրջօրյա ջրամատակարարում և մոտ 1.5 կմ երկարությամբ կոյուղու մեկ կոլեկտոր:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

- L=5430 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- 130 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

- Բաշխիչ ցանցում 9 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգում բարձր ճնշումների կարգավորմանն ուղղված՝ գյուղի տարբեր հատվածներում 2 ճնշման կարգավորիչի և 1 ջրամաչափական հորի կառուցում:

**Ոսկեհասկ գյուղի** բաշխիչ ցանցը պողպատե խողովակներից է, կառուցվել է 1965թ., ունի մոտ 10կմ երկարություն, գտնվում է քայքայված վիճակում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

- L=1200 մ ընդհանուր երկարությամբ արտաքին ջրատարի վերակառուցում՝ DN 150 տրամագծով պողպատե խողովակներով:

- L=15902 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- 488 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

- Բաշխիչ ցանցում 12 փականային հանգույցների և 5 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգում բարձր ճնշումների կարգավորմանն ուղղված՝ գյուղի տարբեր հատվածներում 2 ճնշման կարգավորիչի և 1 ջրամաչափական հորի կառուցում:

**Երազգավորս գյուղի** բաշխիչ ցանցը պողպատե խողովակներից է, կառուցվել է 1980-1982թթ.: Այն գտնվում է վատ վիճակում:



Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

- L=7348 մ ընդհանուր երկարությամբ բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում՝ de50-de225 տրամագծով պոլիէթիլենե խողովակներով:

- 344 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:

- Բաշխիչ ցանցում 11 փականային հանգույցների և 2 հիդրանտային հորերի կառուցում և վերակառուցում:

Ծրագրի շրջանակներում նախատեսված են հողային և ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում:

**Համաձայն գնահատման հաշվետվության՝** ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում առաջանալու են շինարարական թափոններ՝ ավելցուկային գրունտի տեսքով, որոնց ազդեցությունները լինելու են կարճատև: Առաջացած շինարարական աղբը և ավելցուկային գրունտը տեղափոխելու են Գյումրու քաղաքապետարանի և համապատասխան համայնքապետարանների կողմից հատկացված աղբավայրեր, իսկ որոշ հատվածներում դրանք կհարթեցվեն տեղում: Գործունեության արդյունքում առաջանալու են շինարարական հոսքաջրեր և կենցաղային կոյուղաջրեր: Ծրագրով նախատեսված աշխատանքները շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից ունեն ցածր ռիսկեր: Բացասական ազդեցությունները տեղայնացված են, կունենան սահմանափակ ազդեցություն և կկրեն ժամանակավոր բնույթ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով հաշվետվության բնապահպանական և սոցիալական կառավարման պլանով նախատեսված են մոնիթորինգի և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում (կեղտաջրերի, ներառյալ սանիտարական ջրերի պատշաճ հեռացում, թափոնների անվտանգ մեկուսացում, պահեստավորում և այլն), գործողությունների մոտավոր ժամանակացույցը, ծախսերը,:

**Եզրահանգումներ.** Ծրագրի հիմնական աշխատանքները նախատեսված են Գյումրի քաղաքի և գյուղերի բնակելի (ներառյալ միջհամայնքային ճանապարհները) արդեն գոյություն ունեցող կառուցվածքների տարածքներում, որոնք հանդիսանում են ակտիվ ու յուրացված համայնքային միջավայր: Հետևաբար ծրագրի ազդեցությունը հարակից բնական լանդշաֆտների, կենսաբազմազանության և շրջակա միջավայրի այլ բաղադրիչների վրա կլինի նվազագույն, կրելով ժամանակավոր բնույթ: Նախատեսվող տարածքներում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ: Նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կնվազեցնեն գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա: Հաշվետվության փորձաքննության իրականացման ընթացքում ստացվել է համապատասխան մասնագիտական կառույցների կարծիքները՝ առողջապահության, մշակույթի, բնապահպանության նախարարության ստորաբաժանումներ, որոնց հիման վրա հաշվետվությունը լրամշակվել է:

Ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքները նկատելի դրական ազդեցություն կունենան մարզի շրջակա միջավայրի և համայնքների բնակչության սոցիալական-տնտեսական վիճակի վրա: Արդյունքում՝ ջրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարման և օգտագործման, ջրակորուստների կրճատման, շուրջօրյա ջրամատակարարման և խմելու ջրի բարձր որակի ապահովման, խմելու ջրի արտոտման վտանգի նվազման, վարակիչ հիվանդությունների ներթափանցման կանխման(բացառման),



ջրի հաշվառման համակարգի ներդրման և սպառման արդյունավետության բարձրացման միջոցով, կբարելավեն Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և հարակից գյուղերի բնակչության կյանքի որակը, կենսամակարդակը, բնակչության առողջական պայմանները:

### Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրությային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել մշտադիտարկման (մոնիթորինգ) կատարումը, հետնախազձային վերլուծության ծրագրի կազմումը, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

- Ծրագրի շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ եկած հնարավոր պատմամշակութային և հնագիտական շերտերի առկայության դեպքում անհրաժեշտ է հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացությունն ստանալուց հետո:

- Շինարարության աշխատանքների կատարման ընթացքում հնարավորինս նվազագույնի հասցնել մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների աղտոտումը՝ պահպանելով ծրագրում նախատեսված միջոցառումների կատարումը:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<Հայգյուղիննախագիծ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Շիրակ-Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և 12 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության>> վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Ա. Դոնոյան

Գլխավոր մասնագետ՝

Թ. Նուրիջանյան

